

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿ ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
3 ՄԱՅԻՍԻ 2015 Թ.

Սույն ձեռնարկը կազմվել է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական օրենսգրքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների հիման վրա:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՎՍՏԱՅՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ,
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ.....

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ
ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ,
ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ
ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ.....

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ
(ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

Կուսակցությունները ընտրական ցուցակները գրանցելուց, իսկ թեկնածուները՝ գրանցվելուց հետո, ընտրական հանձնաժողովներում, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, զանգվածային լրատվության միջոցների հետ փոխհարաբերություններում իրենց շահերը պաշտպանելու նպատակով կարող են ունենալ վստահված անձինք: **Վստահված անձ կարող են լինել միայն** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ընտրական իրավունք ունեցող քաղաքացիները:

Վստահված անձ չեն կարող լինել՝ դատավորները, դատախազները, ոստիկանության և ազգային անվտանգության մարմիններում, դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում ծառայողները, զինծառայողները, դիտորդները, թեկնածուները, ընտրական հանձնաժողովի անդամները:

ՎՍՏԱՀՎԱԾ ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Վստահված անձն իրավունք ունի՝

✓ խորհրդակցական ձայնի իրավունքով մասնակցելու հանձնաժողովի նիստերին, քվեարկության ընթացքում ներկա լինելու քվեարկության սենյակում:

Ընտրական հանձնաժողովի նիստին և քվեարկության ընթացքում քվեարկության սենյակում կարող է ներկա լինել յուրաքանչյուր թեկնածուի և համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող յուրաքանչյուր կուսակցության մեկական վստահված անձ:

✓ վստահված անձն ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում), կարող է ներկա լինել, եթե ունի վստահված անձի վկայական:

Վստահված անձը պարտավոր է վստահված անձի իր վկայականը տեսանելի ձևով կրել վերնազգեստի վրա:

! Հանձնաժողովի նախագահն արգելում է ընտրական հանձնաժողովներում, իսկ քվեարկության ընթացքում նաև քվեարկության սենյակում ներկա լինելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև վերնազգեստի վրա առանց համապատասխան վկայականի անձանց ներկայությունն ընտրական հանձնաժողովում (տեղամասային կենտրոնում (քվեարկության սենյակում)):

Ընտրական հանձնաժողովի նիստերին վստահված անձի ներկայությունն արձանագրվում է ընտրական հանձնաժողովի կողմից:

Քվեարկության օրը տեղամասային կենտրոն (քվեարկության սենյակ) վստահված անձի այցելության դեպքում համապատասխան գրառում է կատարվում տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում (նշվում է վստահված անձի անունը, ազգանունը (նշելով թե ում վստահված անձն է հանդիսանում), տեղամաս մուտք գործելու և տեղամասից հեռանալու ժամը).

✓ անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի

արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների), քվեարկության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության արդյունքների ամփոփման, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահը՝ քվեարկության արդյունքների վերահաշվարկի գործընթացը կազմակերպում են այնպես, որ վստահված անձինք հնարավորություն ունենան անարգել հետևել քվեաթերթիկների վավերականության որոշման, քվեաթերթիկների տեսակավորման և հաշվարկման գործընթացներին:

✓ լուսանկարահանել, տեսանկարահանել ընտրական հանձնաժողովների նիստերը, ինչպես նաև քվեարկության ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը, քվեարկության արդյունքների վերահաշվարկի աշխատանքները՝ չխախտելով ընտրողների քվեարկության գաղտնիության իրավունքը:

! Ընտրողների ստորագրած ցուցակները չեն կարող լուսանկարահանվել և տեսանկարահանվել, դրանցից լուսապատճեններ չեն հանվում:

✓ բողոքարկելու ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները, անգործությունը, եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:

✓ հետևելու քվեաթերթիկների տպագրման, փոխադրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

Վստահված անձինք կարող են տպագրության ողջ ընթացքում տպագրատանը հետևել քվեաթերթիկների տպագրմանը, իրենց միջոցներով ուղեկցել քվեաթերթիկները տպագրատնից տեղամասային ընտրական հանձնաժողով, իսկ քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո՝ ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովից տարածքային ընտրական հանձնաժողով տեղափոխող մեքենան:

Վստահված անձինք կարող են քվեարկության նախորդ օրը տարածքային ընտրական հանձնաժողովում հետևել քվեաթերթիկները տեղամասային ընտրական հանձնաժողովներին հատկացնելու գործընթացին, դրանց պահպանմանը, քվեարկությանը նախորդող և քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովում չմիջամտելով հանձնաժողովի աշխատանքներին, հետևել քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին:

✓ չմիջամտելով հանձնաժողովի անդամի աշխատանքներին՝ ֆիզիկապես ներկա լինելու հանձնաժողովի՝ ընտրողների գրանցում իրականացնող, քվեաթերթիկ հատկացնող, քվեաթերթիկ կնքող և քվեատուփը հսկող անդամների կողքին և հետևելու նրանց աշխատանքներին:

✓ քվեարկության օրը հետևելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և դրանց վերաբերյալ հանձնաժողովի նախագահին ներկայացնելու դիտարկումներ և առաջարկություններ:

✓ ներկա լինել ստացիոնար բուժում իրականացնող բժշկական հաստատություններում քվեարկողների քվեարկության կազմակերպմանը:

✓ քվեարկության արդյունքներն ամփոփելիս տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կամ հանձնաժողովի

անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին, ներկա լինելու քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը.

✓ պահանջելու, որ իր գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում, եթե գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել **ԼԴՅ** ընտրական օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում:

Վստահված անձը պարտավոր է՝

✓ պահպանել **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության** ընտրական օրենսգրքի պահանջները.

✓ իր լիազորություններն իրականացնել ընտրական օրենսգրքով սահմանված կարգով.

✓ ունենալ անձը հաստատող փաստաթուղթ և սահմանված նմուշի վկայական՝ այն տեսանելի ձևով կրելով վերնագգեստի վրա:

Վստահված անձի գործունեության երաշխիքները

Վստահված անձի **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության** ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի վստահված անձանց դուրս հանելու քվեարկության սենյակից կամ այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի:

Վստահված անձն իրավունք ունի ստորագրել՝

✓ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելիս հաշվարկված և տեսակավորված քվեաթերթիկների փաթեթները:

Վստահված անձի պահանջով հանձնաժողովի անդամը կարող է ստուգել (վստահված անձին ներկայացնել) ընտրողի անձը հաստատող փաստաթուղթը:

Վստահված անձի պահանջով նրան տրվում է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով:

! Վստահված անձն իրավունք չունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության նախորդ օրը

Տեղամասային ընտրական հանձնաժողովը վիճակահանությամբ որոշում է քվեաթերթիկներն ստորագրող հանձնաժողովի երեք անդամի, ովքեր պարտավոր են այդ օրը՝ մինչև **ժամը 24.00-ն**, ստորագրել բոլոր քվեաթերթիկների հակառակ կողմում:

!Քվեաթերթիկներն ստորագրելու ընթացքում հանձնաժողովի անդամը ստորագրման իր ընտրած տարբերակը փոխել չի կարող

Տեղամասային ընտրական հանձնաժողովի գործողությունները քվեարկության օրը

Քվեարկության օրը տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստը տեղամասային կենտրոնում սկսվում է ***ժամը 7.00-ին:***

Հանձնաժողովն իր նիստում վիճակահանությանը որոշում է հանձնաժողովի անդամների միջև աշխատանքային պարտականությունների բաշխումը:

Մինչև տեղամասային կենտրոնի բացումը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկությանը ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ.

✓ հանում է փաթեթավորված կնիքը, քվեաթերթիկները, ընտրողների ցուցակները,

✓ ստուգում է փաթեթավորված կնիքի փաթեթի անձեռնմխելիությունը, բացում է փաթեթավորված կնիքը, գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը,

✓ ստուգում է քվեատուփի դատարկ լինելը, փակում և կնքում է քվեատուփը(անհրաժեշտության դեպքում նաև՝ շրջիկ արկղը),

✓ ընտրողների ցուցակները հանձնում է ընտրողների գրանցման համար պատասխանատու անդամ(ներ)ին, քվեաթերթիկները՝ քվեաթերթիկ հատկացնող անդամ(ներ)ին, կնիքը՝ քվեաթերթիկը կնքող անդամին:

! Վերոհիշյալ բոլոր գործողությունների մասին տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում կատարվում են համապատասխան գրառումներ:

ժամը 8:00-ին ընտրական տեղամասը հայտարարվում է բացված և թույլատրվում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ

1. Ընտրողների գրանցումը

Քվեարկությանը ներկայացած յուրաքանչյուր ընտրող պետք է գրանցվի հանձնաժողովի գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ընտրողների ցուցակում՝ ներկայացնելով անձը հաստատող փաստաթուղթ:Առանց սիմանված կարգով գրանցվելու՝ ընտրողը չի կարող քվեաթերթիկ ստանալ և քվեարկել:

Եթե ընտրողը չի կարող ինքնուրույն ստորագրել ընտրողների ցուցակում, ապա նա իրավունք ունի դիմելու այլ քաղաքացու օգնության, բացառությամբ ընտրական հանձնաժողովի անդամների և վստահված անձանց:

2. Քվեաթերթիկ ստանալը

Գրանցվելուց անմիջապես հետո ընտրողը մոտենում է հանձնաժողովի՝ քվեաթերթիկների տրամադրման համար պատասխանատու անդամին, որը քվեաթերթիկը հանձնում է ընտրողին:

3. Քվեաթերթիկը կնքելը

Քվեաթերթիկը կնքող հանձնաժողովի անդամը հանոգվում է ընտրողի՝ տվյալ ընտրական տեղամասում հաշվառված լինելու մեջ և կնքում է քվեաթերթիկը:

4. Քվեարկությունը

Ստանալով համամասնական և մեծամասնական ընտրակարգով քվեաթերթիկները՝ ընտրողն անցնում է քվեարկության խցիկ՝ քվեարկելու:

! Ընտրողը քվեաթերթիկը լրացնում է գաղտնի՝ քվեարկության խցիկում:

Արգելվում է որևէ ձևով տեղեկանալ, թե ընտրողն ինչպես է քվեարկում:

Քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող ընտրողն իրավունք ունի հանձնաժողովի նախագահին տեղեկացնելուց հետո քվեարկության խցիկ հրավիրելու այլ անձի, որը չպետք է լինի ընտրական հանձնաժողովի անդամ, վստահված անձ :

! Անձն իրավունք ունի օգնելու քվեաթերթիկն ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող միայն մեկ ընտրողի:

ՈՒ Շ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն- Սահմանափակ ֆիզիկական հնարավորություններ, ինչպես նաև քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողները, առանց տեղամասային կենտրոնի տեղակայման շենք մտնելու քվեարկությանը մասնակցում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի օգնությամբ, առնվազն 1 վստահված անձի կամ առնվազն 1 դիտորդի, կամ վստահված անձի ու դիտորդի, կամ ընտրողին օգնելու իրավունք ունեցող քաղաքացու ներկայությամբ:

Եթե ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել կամ վնասել է, ապա կարող է դիմել հանձնաժողովի նախագահին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար:

Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ ընտրողին հատկացվում է նոր քվեաթերթիկ, ընտրողների ցուցակում կատարվում է համապատասխան նշում տվյալ ընտրողի անվան, ազգանվան դիմաց: Սխալ լրացված (վնասված) քվեաթերթիկն անհապաղ մարվում է:

Ընտրողը մոտենում է քվեատուփի համար պատասխանատու անդամին, որը ընտրողին հնարավորություն է ընձեռում քվեաթերթիկը գցելու քվեատուփի մեջ:

Տեղամասային կենտրոնի փակումը

ժամը 20:00 -ին տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեարկության ավարտի մասին և

✓ արգելում է ընտրողների մուտքը քվեարկության սենյակ.

✓ քվեարկության սենյակում գտնվող ընտրողներին քվեարկելու հնարավորություն է տալիս.

✓ փակում է քվեատուփի ճեղքը.

✓ փակում է տեղամասային կենտրոնը:

Քվեարկության արդյունքների ամփոփումը

Քվեարկության արդյունքների ամփոփումը կատարվում է քվեարկության սենյակում: Քվեարկության արդյունքների ամփոփումն սկսվում է անմիջապես քվեարկության ավարտից հետո և ընթանում առանց ընդհատման մինչև քվեարկության արդյունքների ամփոփման վերաբերյալ արձանագրության կազմումը: Նախ ամփոփվում են համամասնական ընտրակարգով քվեարկության արդյունքները, ապա՝ մեծամասնական:

Քվեարկության արդյունքների ամփոփման փուլում կատարվում են հետևյալ գործողությունները՝

1. հաշվարկվում է չօգտագործված, ընտրողների կողմից ոչ ճիշտ լրացված (վնասված) և հետ տրված քվեաթերթիկների ընդհանուր թիվը.

2. հաշվարկվում է ընտրողների յուրաքանչյուր լրացուցիչ ցուցակի (այդ թվում՝ քվեարկության օրն ընտրական տեղամասում կազմված լրացուցիչ ցուցակի) ընտրողների թիվը՝ առանձին-առանձին, ստացվում է ընտրական տեղամասում ընտրողների ընդհանուր թիվը.

3. հաշվարկվում և արձանագրվում է քվեարկության մասնակիցների թիվը ընտրողների ցուցակներում (այդ թվում՝ լրացուցիչ ցուցակներում)՝ ընտրողների ստորագրությունների հիման վրա.

4. տեսակավորվում են քվեաթերթիկները.

Հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը: Քվեատուփից հանում է մեկ քվեաթերթիկ: Հանձնաժողովի նախագահը հայտարարում է քվեաթերթիկի վավեր, անվավեր կամ չսահմանված նմուշի լինելու մասին, վավեր քվեաթերթիկի դեպքում հայտարարում նաև, թե ինչպես է քվեարկված, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաների համար: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին: Հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում հանձնաժողովի անդամը ներկայացնում է առարկություն: Առարկության դեպքում քվեարկության արդյունքով (քվեարկության է դրվում հանձնաժողովի անդամի առաջարկությունը, և եթե հանձնաժողովի անդամի առաջարկությունը քվեարկությամբ չի ընդունվում, ապա ընդունված է համարվում հանձնաժողովի նախագահի առաջարկությունը),

իսկ առարկություն չլինելու դեպքում հանձնաժողովի նախագահը, իր հայտարարության համաձայն, ըստ քվեաթերթիկում կատարված քվեարկության նշումի, քվեաթերթիկը դնում է համապատասխան թեկնածուի օգտին, մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին կողմ կամ դեմ քվեարկված կամ անվավեր քվեաթերթիկների փաթեթի մեջ, որից հետո քվեատուփից հանում է հաջորդ քվեաթերթիկը:

Այդ գործողությունը կրկնվում է քվեատուփում առկա բոլոր քվեաթերթիկների համար:

Քվեաթերթիկների վավերականությունը

Սահմանված նմուշի քվեաթերթիկն անվավեր է, եթե՝

✓ մեկից ավելի թեկնածուի, կուսակցության (կուսակցությունների դաշինքի) օգտին նշումներ է ներառում.

✓ մեկ թեկնածու քվեարկվելու դեպքում միաժամանակ «կողմ են» և «դեմ են» բառերի դիմաց նշումներ է ներառում.

✓ որևէ նշում չի ներառում.

✓ բացի քվեարկության համար կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կամ դրան նմանվող նշանից ներառում է այլ՝ ընտրողի ինքնությունը բացահայտող նշում.

✓ քվեաթերթիկի վերին աջ անկյունում ՏԸՀ կնիքով կնքված չէ.

✓ ընտրական հանձնաժողովի 3 անդամի կողմից քվեաթերթիկի հակառակ կողմում ստորագրված չէ.

✓ ակնհայտ խախտված է քվեաթերթիկում նշում կատարելու սահմանված ձևը:

Սահմանված ձևի ոչ էական խախտումը չի կարող համարվել քվեաթերթիկի անվավերության հիմք, եթե ընտրողի մտադրությունը հստակ է և աներկբա:

Տեսակավորման ողջ ընթացքում հանձնաժողովի անդամներին արգելվում է նշումներ կատարել, ինչպես նաև իրենց մոտ ունենալ գրիչներ, մատիտներ և նշումներ կատարելու այլ առարկաներ:

5. հաշվարկվում և հրապարակվում են.

✓ յուրաքանչյուր թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,

✓ մեկ թեկնածու, կուսակցություն (կուսակցությունների դաշինք) քվեարկվելու դեպքում՝ թեկնածուին, կուսակցությանը (կուսակցությունների դաշինքին) կողմ կամ դեմ քվեարկված քվեաթերթիկների թիվը,

✓ անվավեր քվեաթերթիկների թիվը:

Հաշվարկված թվերը հրապարակվում են և արձանագրվում գրանցամատյանում:

Հիմք ընդունելով կատարված հաշվարկները և գրանցամատյանում արձանագրված տվյալները տեղամասային ընտրական հանձնաժողովը կազմում է տեղամասում

քվեարկության արդյունքների արձանագրություն: Արձանագրության կազմումը հանձնաժողովը պետք է ավարտի քվեարկության ավարտից *ոչ ուշ, քան 10 ժամ* հետո:

Քվեարկության ավարտից հետո` *ոչ ուշ, քան 12 ժամվա* ընթացքում, տարածքային ընտրական հանձնաժողով են ներկայացվում.

✓ ընտրական փաստաթղթերի կնքված ընդհանուր փաթեթը (քվեաթերթիկներ, ընտրացուցակներ, ՏԸՀ արձանագրությունների 1-ական օրինակ),

✓ քվեարկության արդյունքների արձանագրության 2 օրինակը,

✓ քվեարկության մասնակիցների թվի վերաբերյալ արձանագրությունը,

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի գործավարության մատյանը,

✓ տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը,

✓ քվեատուփը /քվեատուփերը, շրջիկ արկղը/,

✓ քվեարկության խցիկները:

Ընտրական փաստաթղթերը տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը տարածքային ընտրական հանձնաժողով են տեղափոխում ոստիկանության ծառայողների ուղեկցությամբ:

Ընտրական փաստաթղթերը տարածքային ընտրական հանձնաժողովում հանձնվում և ընդունվում են հանձնողի ու ընդունողի կողմից ստորագրելու և ստացական տալու միջոցով:

Տարածքային ընտրական հանձնաժողովի գործողությունները տեղամասային ընտրական հանձնաժողովների արձանագրությունները ստանալուց հետո

Տարածքային ընտրական հանձնաժողովում ստուգվում է ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունների կազմման վավերականությունը, իսկ թվաբանական սխալների առկայության դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը վերացնում են այդ սխալները` ուղղումները վավերացնելով իրենց ստորագրություններով:

! Ելակետային տվյալների փոփոխություն չի կատարվում: Ելակետային են տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից հատ-հատ հաշվելու միջոցով ստացված տվյալները:

Տարածքային ընտրական հանձնաժողովում նշում է կատարվում տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրության ընդունման ամսաթվի և ժամանակի մասին, ինչը վավերացվում է տարածքային ընտրական հանձնաժողովի նախագահի ստորագրությամբ և հանձնաժողովի կնիքով:

Տարածքային ընտրական հանձնաժողովը համեմատում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի համարը տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրության կնիքի համարի հետ:

Համապետական ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը պարբերաբար, բայց **ոչ ուշ, քան 3 ժամը մեկ** կատարում է տարածքում քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի:

Տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ընտրական տեղամասերում քվեարկության արդյունքների արձանագրությունների տվյալների աղյուսակավորումն ավարտվում է քվեարկության ավարտից հետո՝ **ոչ ուշ, քան 18 ժամվա** ընթացքում:

Ընտրության արդյունքների ամփոփում

Մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների քվեարկության ***նախնական արդյունքները*** համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվում և արձանագրությամբ վավերացվում են քվեարկության ավարտից հետո՝ **ոչ ուշ, քան 18 ժամվա ընթացքում:**

Իսկ համասնական ընտրակարգով ընտրությունների քվեարկության ***նախնական արդյունքները*** կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ամփոփվում, արձանագրությամբ վավերացվում ու հանրային հեռուստատեսությամբ ուղիղ եթերով պաշտոնապես հրապարակվում են քվեարկության ավարտից հետո՝ **ոչ ուշ, քան 24 ժամ հետո:**

Ընտրությունների արդյունքներն ամփոփվում և դրա վերաբերյալ ***վերջնական որոշում*** ընդունվում է քվեարկության օրվանից հետո՝ **7-րդ օրը:**

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումները տեղադրված են կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում ***www.cecncr.am:***

ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՆԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՂՈՔԱՐԿԵԼԸ

Վստահված անձը կարող է բողոքարկել ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), եթե գտնում է, որ խախտվել են վստահված անձի կամ իր վստահորդի (թեկնածուի)՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքները:

Վստահված անձը ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացնել՝ միայն այն դեպքում եթե ներկա է եղել տվյալ ընտրական տեղամասում:

✓ Տեղամասային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը), ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները կարող են բողոքարկվել համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով: Տարածքային ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել կենտրոնական ընտրական հանձնաժողով: Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով

պատգամավորի ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Գերագույն դատարան:

✓ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումները, գործողությունները (անգործությունը) (բացառությամբ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումների) կարող են բողոքարկվել վարչական դատարան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի՝ համապետական ընտրությունների արդյունքների վերաբերյալ որոշումները կարող են բողոքարկվել Գերագույն դատարան:

✓ Ընտրական հանձնաժողովների որոշումները, գործողությունները (անգործությունը) վերադաս ընտրական հանձնաժողով բողոքարկելու դեպքում բողոք ներկայացնող կողմը կրում է իր ներկայացրած փաստական հանգամանքների ապացուցման բեռը, իսկ ընտրական հանձնաժողովը՝ իր կայացրած որոշման հիմքում ընկած փաստական հանգամանքների ապացուցման բեռը: Բողոքը քննող ընտրական հանձնաժողովն ի պաշտոնե կարող է ապացույցներ հայթայթել: Այս կանոնները վերաբերում են նաև ընտրական տեղամասում արդյունքներն անվավեր ճանաչելու կամ ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումին:

✓ Քվեարկության օրվա ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ***քվեարկության օրը կամ քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն:***

Քվեարկության օրվան նախորդող օրերի ընթացքում տեղամասային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել տարածքային ընտրական հանձնաժողով ***2 օրվա ընթացքում*** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:

Տարածքային ընտրական հանձնաժողովի ընդունած որոշումների, գործողությունների կամ անգործության մասին բողոքները կարող են ներկայացվել կենտրոնական ընտրական հանձնաժողով ***3 օրվա ընթացքում*** այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ ողջամտորեն պարտավոր էր իմանալ խախտման մասին:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել միայն ***քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն:***

Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում համապատասխան ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետի ավարտից ***ոչ ուշ, քան 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն:***

Դիմումներին և բողոքներին ներկայացվող պահանջները

Դիմումը հասցեագրվում է այն ընտրական հանձնաժողովին, որի իրավասության սահմաններում է բարձրացված հարցի լուծումը:

Եթե դիմում տալու համար սույն օրենսգրքով նախատեսված է վերջնաժամկետ, ապա դիմումը համարվում է պատշաճ ժամկետում ներկայացված, եթե այն միջև վերջնաժամկետը մուտքագրվել է համապատասխան ընտրական հանձնաժողով:

Դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կամ բողոք բերողի կողմից, ներառի նրա անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն), տրման ամսաթիվը: Դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի էլեկտրոնային կապի որևէ միջոցի տվյալները

(հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն և այլն): Դիմումատուին պետք է հստակ սահմանի իր պահանջը, բերի հիմնավորումներ, իսկ հնարավոր ապացույցները կցի դիմումին: Դիմումատուի վերաբերյալ տվյալներ չներառող կամ կեղծ տվյալներ ներառող դիմումներ չեն քննարկվում:

Դիմումների (բողոքների) քննարկման ժամկետները

Ընտրություններ նշանակվելուց հետո՝ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը, ընտրական հանձնաժողովները բողոքներին և դիմումներին պատասխանում են, իսկ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերում դրանց վերաբերյալ որոշումներ ընդունում են ***5-օրյա ժամկետում***, բայց ոչ ուշ, քան համապատասխանաբար մինչև քվեարկության նախորդ օրը կամ մինչև ընտրությունների արդյունքների ամփոփումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ

Վստահված անձը կարող է քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում ներկայացնել, եթե անձամբ ներկա է եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով ***քվեարկության հաջորդ օրը՝ մինչև ժամը 18.00-ն:***

Վերահաշվարկի դիմումը պետք է ներառի դիմումատուի անունը, ազգանունը, բնակության վայրը (հասցեն) և այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ, ինչպես նաև այն քվեարկության արդյունքները (եթե միաժամանակ կայացել է մի քանի քվեարկություն), որոնց վերաբերյալ պահանջվում է վերահաշվարկ անցկացնել: Դիմումին կարող են կցվել քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ:

Տարածքային ընտրական հանձնաժողովը մերժում է ընտրական տեղամասի քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին դիմումը և վերահաշվարկ չի իրականացնում, եթե պահանջվել է քվեարկության արդյունքների վերահաշվարկի իրականացում LԴՅ ընտրական օրենսգրքի 47-րդ հոդվածի դրույթների խախտումով:

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ
ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄԸ
(ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՋՈՐԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ)

Քայլ 1.

20:00-ին արգելել ընտրողների մուտքը քվեարկության սենյակ, վերջին քվեարկողից հետո փակել քվեատուփի ճեղքը, փակել տեղամասային կենտրոնը, հաշվել քվեարկությանը մասնակցած ընտրողների թիվը և անհապաղ հաղորդել տարածքային ընտրական հանձնաժողով:

Քայլ 2.

Հաշվարկել՝

1. չօգտագործված քվեաթերթիկների թիվը և մարել, այդ թվին ավելացնել նախկինում մարված՝ ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված և հետ տրված, տպագրական խոտանի պատճառով սահմանված նմուշից տարբերվող քվեաթերթիկները.

2. ընտրողի կողմից ոչ ճիշտ լրացված՝ հետ տրված և մարված քվեաթերթիկների թիվը.

3. ստացած թվերը գումարել և որպես մարված քվեաթերթիկների ընդհանուր թիվ բարձրաձայն հայտարարել և լրացնել գրանցամատյանում.

4. փաթեթավորել մարված քվեաթերթիկները և փաթեթի վրա նշելով <<Մարված քվեաթերթիկներ >>՝ տեղադրել ընդհանուր փաթեթում:

Քայլ 3.

Հաշվարկել՝

1. յուրաքանչյուր ցուցակում ընդգրկված ընտրողների թիվը , յուրաքանչյուր ցուցակի համար առանձին-առանձին բարձրաձայն հայտարարել և լրացնել գրանցամատյանում՝ յուրաքանչյուր թիվն իր անվան դիմաց: Բոլոր ցուցակների ընտրողների թվերը գումարել, բարձրաձայն հայտարարել թիվը և որպես ընտրողների ընդհանուր թիվ լրացնել գրանցամատյանում.

2. յուրաքանչյուր ցուցակում քվեարկության մասնակցած ընտրողների թիվը (ստորագրությունների հիման վրա), յուրաքանչյուր ցուցակի համար առանձին-առանձին բարձրաձայն հայտարարել և լրացնել գրանցամատյանում՝ յուրաքանչյուր թիվն իր անվան դիմաց: Բոլոր ցուցակների մասնակիցների թվերը գումարել, բարձրաձայն հայտարարել թիվը և որպես մասնակիցների ընդհանուր թիվ լրացնել գրանցամատյանում.

3. փաթեթավորել ընտրողների ցուցակները , փաթեթի վրա նշել <<Ընտրողների ցուցակներ>>՝ տեղադրել ընդհանուր փաթեթում:

Քայլ 4.

Բացել քվեատուփը և սահմանված կարգով տեսակավորել քվեաթերթիկները:

Քայլ 5.

Հաշվարկել տեսակավորված քվեաթերթիկները , ստացված թվերը բարձրաձայն հայտարարել և լրացնել գրանցամատյանում:

1.Փաթեթավորել հաշվարկված քվեաթերթիկները, տեղադրել ընդհանուր փաթեթում:

Քայլ 6.

Կազմել և ստորագրել տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունը՝ 4 օրինակից.

1. մեկ օրինակը փակցնել տեղամասային կենտրոնում՝ ընտրողների ցուցակների կողքին.

2. մեկ օրինակը տեղադրել ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթում և փաթեթը կնքել.

3. երկու օրինակն անձեռն ներկայացնել տարածքային ընտրական հանձնաժողով՝

- ընտրական փաստաթղթերի ընդհանուր փաթեթի ,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանի,
- տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքի հետ: